ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N-1

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

31.08. 2022թ. ք. Իջևան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցում էին գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա. Ալեքսանյանը, Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Սարիբեկյանը, Թ. Վարդանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, Դ. Աֆյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Թ. Ջանվելյան, Հ. Սանթրոսյանը: Նիստն անցկացվել է zoom.us հարթակում:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

Օրակարգ

1. Հաղորդում առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման, նախապատրաստական աշխատանքերի մասին /զեկ. Ա. Մարգարյան/:
2. Դեկանատի կազմի քննարկում և հաստատում /զեկ. Ա. Մարգարյան/:
3. 2022-2023 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմի քննարկում և հաստատում /զեկ. Ա. Մարգարյան/:
4. Անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկում /զեկ. Ա. Մարգարյան/:
5. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի քննարկում և հաստատում /զեկ. Ա. Մարգարյան/:

Բաց քվեարկությամբ 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում 1/1

- Հաստատել նիստի օրակարգը:

1. *Լսեցին.- Հաղորդում առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման, նախապատրաստական աշխատանքների մասին /զեկ. Ա. Մարգարյան/:*

Ա. Մարգարյանը հաղորդեց, որ իրականացվել են առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի մեկնարկի անհրաժեշտ կազմակերպական աշխատանքները: Գործընթացն արդյունավետ և անխափան դարձնելու համար կազմվել են դասացուցակներ, որոնցում համապատասխան ժամաքանակներով արտացոլված են ուսումնական պլանով առաջին կիսամյակում դասավանդվող առարկաները: Դասախոսների զուգադիպումներից խուսափելու համար այլ ֆակուլտետների դեկանների հետ նախապես կատարվել է դասացուցակների համեմատություն:

Արտահայտվեցին.- Գ. Հովհաննիսյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.8 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման, նախապատրաստական աշխատանքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. *Լսեցին.- Դեկանատի կազմի քննարկում և հաստատում /զեկ. Ա.Մարգարյան/:*

Ա. Մարգարյանը ներկայացրեց դեկանատի կազմը և առաջարկեց քննարկել ու հաստատել:

1. Ա. Մարգարյան	դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ,
2. Ա Ալեքսանյան	«Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի ասիստենտ, խորհրդի քարտուղար,
3. Մ. Միքայելյան	«Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի վարիչ,
4. Գ. Հովհաննիսյան	«Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի վարիչ,
5. Պ. Ասիլբեկյան	ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ,

6. Թ. Զանվելյան ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ,
7. Ն. Բեգինյան ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ,

Արտահայտվեցին.- Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը:

Գիտխորհրդի անդամները հավանության արժանացրին և միաձայն քվեարկությամբ հաստատեցին դեկանատի կազմը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.18 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.– Հաստատել ֆակուլտետի գիտխորհրդի նախագահի կողմից ներկայացված դեկանատի կազմը:

3. Լսեցին.- 2022-2023 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմի քննարկման և հաստատման մասին /զեկ. Ա. Մարգարյան/:

Ա. Մարգարյանը նշեց, որ մանդատային հանձնաժողովի ձևավորման համար հիմք են ընդունվել «ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման» կանոնակարգի /10 կետ/ պահանջները: Նա ներկայացրեց 2022-2023 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովը հետևյալ կազմով.

1. Ա. Մարգարյան դեկան, մանդատային հանձնաժողովի նախագահ,
2. Պ. Ասիլբեկյան ֆակուլտետի արհմիության նախագահ, մանդատային հանձնաժողովի քարտուղար,
3. Ա. Սարիբեկյան Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ,
4. Թ. Զանվելյան ֆակուլտետի ՈՒԽ նախագահ,
5. Ն.Բեգինյան ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ,

Արտահայտվեցին.- Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.18 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հավանության արժանացնել 2022-2023 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի անդամների թեկնածությունները և կազմը ներկայացնել տնօրենի հաստատմանը:

4. Լսեցին.– 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի մասնաճյուղային անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկման մասին /զեկ. Ա. Մարգարյան/:

Դեկանը ներկայացրեց մասնաճյուղում գործող անվանական կրթաթոշակների հատկացման կարգն ու պայմանները: Այն տրվում է առավել աչքի ընկած, գերազանց առաջադիմություն և բարձր հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողին, որպես ֆինանսական խրախուսանք: Ըստ մասնաճյուղում գործող կարգի՝ անվանական կրթաթոշակի հավակնորդին առաջադրված պահանջները բավարարում են հետևյալ ուսանողները:

«Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի ներկայացվեց ֆակուլտետի «Ֆինանսներ» մասնագիտության IV կուրսի ուսանողուհի Ռուզան Սմբատի Խառատյանը:

«Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի ներկայացվեց «Ֆինանսներ» մասնագիտության IV կուրսի ուսանողուհի Գոհար Արմենի Եգանյանը:

«Արցախյան 44 օրյա պատերազմում անմահացած ուսանող» անվանական կրթաթոշակի ներկայցվեց, «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանողուհի Լիանա Արմենի Մարտիրոսյանը:

«Իջևան» անվանական կրթաթոշակի հավակնորդ է «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի առկա ուսուցման երրորդ կուրսի ուսանողուհի Նոննա Մասիսի Հարությունյանը:

«Արտակ Ցուցուլյան» անվանական կրթաթոշակի հավակնորդ է «Ֆինանսներ /ըստ ոլորտի» կրթական ծրագրի առկա ուսուցման չորրորդ կուրսի ուսանողուհի Ռուզան Սմբատի Խառատյանը:

«ԵՊՀ» անվանական կրթաթոշակի ներկայացվեց «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի առկա ուսուցման չորրորդ կուրսի ուսանողուհի Մանե Վահանի Փիրումյանը:

«Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակի հավակնորդ է «Ֆինանսներ /ըստ ոլորտի» կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանողուհի Նարե Միսակի Օթարյանը:

«Սահակ Զորափորեցի» անվանական կրթաթոշակի ներկայացվեց «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանողուհի Նարե Կարենի Ոսկանյանը:

Արտահայտվեցին.- Պ. Ասիլբեկյանը, Ա. Սարիբեկյանը:

Գիտխորհրդի կազմը հավանության արժանացրեց 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդ-թեկնածուների կազմը և միաձայն քվեարկությամբ երաշխավորեց ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանը:

Ղեկավարվելով ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի 34 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հավանության արժանացնել 2022- 2023 ուստարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդների թեկնածությունները և ներկայացնել տնօրինության հաստատմանը:

5. Լսեցին.-Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի քննարկում և հաստատում /զեկ. Ա. Մարգարյան/:

Ներկայացնելով գիտական խորհրդի կազմը, որը ձևավորվել է Տնտեսագիտության ֆալուտետի կանոնադրության համաձայն, Ա. Մարգարյանն առաջարկեց քննարկել և ներկայացնել հաստատման հետևյալ կազմով.

1. Մարգարյան Ալեքսան Շամիլի-ֆակուլտետի դեկանի ժ/պ, ֆ.մ.գ.թ., Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, խորհրդի նախագահ,
2. Ալեքսանյան Անժելա Գրիտելի-Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, խորհրդի քարտուղար,
3. Հովհաննիսյան Գուրգեն Ժորժիկի-Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ, ա.գ.թ., պրոֆեսոր,
4. Միքայելյան Միքայել Վարազդատի-Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժ/պ, տ.գ.դ., պրոֆեսոր,
5. Ասիլբեկյան Պավել Նորիկի-Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, ֆակուլտետի արհեստակցական միության նախագահ,
6. Սարիբեկյան Անուշ Աղաջանի-Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ,
7. Վարդանյան Թրահել Գերասիմի-Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր, ա.գ.դ., «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի ղեկավար,
8. Պոտոսյան Ակսել Հարությունի-Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր, ա.գ.դ.,
9. Ավետիսյան Գայանե Հրաչիկի-Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.,
10. Ուլիխանյան Ալինա Վոլոդյայի-Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ,
11. Աֆյան Դիանա Գրիշայի-ՀՀ ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի Մակրոտնտեսական դեպարտամենտի Վիճակագրության վարչության Ընտրանքային հետազոտությունների և վերլուծությունների բաժնի ղեկավար, տ.գ.թ. ասիստենտ,
12. Ալեքսանյան Գոռ Փարսադանի-Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալության հիմնադիրների խորհրդի նախագահ,

13. Զանվելյան Թինա-«Ֆինանսներ /ըստ ոլորտի» կրթական ծրագրի II կուրսի ուսանողուհի, ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ,
14. Բեգինայն Նարգիզ-«Ֆինանսներ /ըստ ոլորտի» կրթական ծրագրի II կուրսի ուսանողուհի, ֆակուլտետի ՈՒԽ նախագահ,
15. Մնացականյան Լուսինե Արտյոմի-«Զբոսաշրջություն» /հեռակա/ կրթական ծրագրի II կուրսի ուսանողուհի,
16. Սանթրոսյան Հերմինե Արտակի-«Զբոսաշրջություն» կրթական ծրագրի III կուրսի ուսանողուհի:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.18 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հավանության արժանացնել 2022-2023 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի անդամների թեկնածությունները և կազմը ներկայացնել տնօրենի հաստատմանը:

Գիտական խորհրդի նախագահ՝ ***Ա. Մարգարյան***

Քարտուղար՝ ***Ա. Ալեքսանյան***